

Կ-1125-30.11.2016-SS-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Հոդված 1. «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-185 օրենքը շարադրել նոր խմբագրությամբ՝

«ԳԼՈՒԽ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

1. Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում տեղական տուրքերի և վճարների հետ կապված հարաբերությունները, սահմանում է տեղական տուրքերի և վճարների հասկացությունները, տեղական տուրքեր և վճարներ վճարողների իրավունքները և պարտականությունները, տեղական տուրքերի և վճարների տեսակները, դրույքաչափերը կամ փոխհատուցման վճարները, գանձման, արտոնությունների կիրառման, ավել վճարված գումարների վերադարձման կարգն ու պայմանները:

Հոդված 2. Տեղական տուրքերի և վճարների իրավական կարգավորումը

1. Տեղական տուրքերի և վճարների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, սույն օրենքով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական վճարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և իրավական այլ ակտերով:

2. Եթե Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերով սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են սույն օրենքով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը:

Հոդված 3. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

1. Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

1) Տեղական տուրք՝ տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների իրականացմամբ պայմանավորված, օրենքով սահմանված գործողությունների համար համայնքի բյուջե վճարվող՝ սույն օրենքի դրույթների հիման վրա ավագանու կողմից սահմանված պարտադիր գանձույթ:

2) Տեղական վճար՝ տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների շրջանակներում, համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների համար՝ համայնքի բյուջե կամ բյուջեի բաղկացուցիչ մաս կազմող, օրենքի համաձայն բացված արտաբյուջետային միջոցների հաշվին վճարվող, սույն օրենքի դրույթների հիման վրա ավագանու կողմից սահմանված պարտադիր գանձույթ:

3) Տեղական տուրք հաշվարկող և գանձող՝ համայնք:

4) Տեղական վճար հաշվարկող և գանձող՝ համայնք կամ համայնքի պատվերով ծառայություններ մատուցող անձ:

5) Տեղական տուրք և (կամ) վճար հաշվարկող և (կամ) գանձող պաշտոնատար անձ՝ տեղական տուրք և (կամ) վճար հաշվարկելու և (կամ) գանձելու իրավասություն ունեցող անձ:

6) Տեղական տուրք և (կամ) վճար վճարողներ՝ սույն օրենքի 9-րդ հոդվածով նախատեսված գործողություններից և 10-րդ հոդվածով նախատեսված համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցվող ծառայություններից օգտվող անձինք:

ԳԼՈՒԽ 2

ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔ ԵՎ (ԿԱՄ) ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՈՒՄԸ, ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 4. Տեղական տուրք և (կամ) վճար վճարողների հաշվառումը

1. Համայնքի ղեկավարն իրականացնում է տեղական տուրք և (կամ) վճար վճարողների հաշվառումը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

2. Համայնքի ղեկավարը հաշվառումն իրականացնում է տեղական տուրք և (կամ) վճար վճարողների գրանցամատյաններում, որոնք վարվում են ըստ տեղական տուրքերի և վճարների առանձին տեսակների: Ավագանու որոշմամբ հաստատված կարգի համաձայն՝ տեղական տուրք և (կամ) վճար վճարողների գրանցամատյանները կարող են լինել փաստաթղթային կամ էլեկտրոնային (համակարգչային ծրագրի կամ ինտերնետային կայքի տեսքով):

Հոդված 5. Տեղական տուրք և (կամ) վճար վճարողների իրավունքները

1. Տեղական տուրք և (կամ) վճար վճարողներն իրավունք ունեն՝

1) ինքնուրույն հաշվարկել իրենց կողմից վճարվող տեղական տուրքի և (կամ) վճարի չափը և ստուգել դրա համապատասխանությունը համայնքի և (կամ) համայնքի պատվերով ծառայություններ մատուցող անձի կողմից կատարված հաշվարկների հետ:

2) պահանջել տեղական տուրք և (կամ) վճար գանձող պաշտոնատար անձանցից՝ կատարելու տուրքի և (կամ) վճարի հաշվարկ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև վերահաշվարկ:

3) ծանոթանալ իրենց կողմից վճարվող տեղական տուրքի և (կամ) վճարի չափի և հաշվարկների հետ, ինչպես նաև տեղեկություններ կամ տեղեկանք ստանալ իր կողմից կատարված վճարումների մասին:

4) դիմել համայնքի ղեկավարին՝ սույն օրենքով սահմանված կարգով տեղական տուրքի և (կամ) վճարի վճարման արտոնություններ ստանալու համար.

5) դիմել համայնքի ղեկավարին՝ սույն օրենքով սահմանված կարգով վերադարձման ենթակա տեղական տուրքի և (կամ) վճարի գումարը ստանալու համար.

6) օրենքով սահմանված կարգով մասնակցել տեղական ինքնակառավարման մարմնի կողմից տեղական տուրքի և (կամ) վճարի սահմանման կամ դրույքաչափերի փոփոխության համար կազմակերպվող հանրային լսումներին և համայնքի կողմից իրականացվող իրազեկման միջոցառումների արդյունքում ստանալ համապատասխան տեղեկություններ.

7) վերադասության, ինչպես նաև դատական կարգով բողոքարկել տեղական տուրք և (կամ) վճար գանձող պաշտոնատար անձանց գործողությունները:

Հոդված 6. Տեղական տուրք կամ վճար վճարողների պարտականությունները

1. Տեղական տուրք և (կամ) վճար վճարողները պարտավոր են՝

1) սահմանված ժամկետում և կարգով լրիվ վճարել սույն օրենքով սահմանված տեղական տուրքերը և (կամ) վճարները.

2) տեղական տուրքի և (կամ) վճարի վճարումը հավաստող փաստաթղթերը կամ դրանց պատճենները ներկայացնել սույն օրենքով սահմանված գործողություններ իրականացնող կամ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով ծառայություններ մատուցող անձանց.

3) ներկայացնել տեղական տուրքի և (կամ) վճարի վճարման գծով իրեն վերապահված արտոնությունները հիմնավորող փաստաթղթերը կամ դրանց պատճենները.

4) սույն օրենքով սահմանված դեպքերում վճարել տեղական տուրքը և (կամ) վճարը ժամանակին չվճարելու համար հաշվարկված տույժի գումարները:

2. Սույն օրենքի 9-րդ հոդվածով սահմանված համապատասխան թույլտվությունը ստանալուց հետո, տուրք վճարողը պարտավոր է իր գործունեությունը կազմակերպել և իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան:

Հոդված 7. Տեղական տուրքի կամ վճարի գծով պարտավորության դադարումը

1. Տեղական տուրքի կամ վճարի վճարման պարտավորությունը դադարում է՝ այդ պարտավորության կատարումով, տեղական տուրքի կամ վճարի վճարումից ազատումով և օրենքով սահմանված այլ հիմքերով, այդ թվում՝ տեղական տուրք և (կամ) վճար վճարող ֆիզիկական անձի մահվան դեպքում:

ԳԼՈՒԽ 3

ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Հոդված 8. Տեղական տուրքերի և վճարների տեսակների սահմանումը

1. Տեղական տուրքերի տեսակները և դրանց դրույքաչափերը սահմանվում են սույն օրենքով:

2. Տեղական վճարները և դրանց դրույքաչափերը սահմանվում են սույն օրենքով, ինչպես նաև համայնքի ավագանու որոշմամբ՝ սահմանելով սույն օրենքի տեղական վճարների տեսակների մեջ չներառված տեղական վճարների նոր տեսակներ և դրանց դրույքաչափերը:

3. Համայնքի ավագանին՝ սույն օրենքով սահմանված տեղական տուրքերի և վճարների տեսակների և դրույքաչափերի շրջանակներում, սահմանում է տեղական տուրքեր և վճարներ:

4. Համայնքի ավագանին սահմանում է նաև այն դեպքերը, երբ կարող են մերժվել սույն օրենքով սահմանված թույլտվությունների տրամադրումը կամ գործողությունների կատարումը (վավերացումը):

Հոդված 9. Տեղական տուրքերի տեսակները

1. Հայաստանի Հանրապետության համայնքներում սահմանվում են տեղական տուրքերի հետևյալ տեսակները՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար.

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվություն համար.

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար.

5) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային համայնքների վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար.

6) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում, կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում, կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար.

7) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային համայնքների վարչական տարածքում գտնվող խանութներում, կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում, կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար.

8) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առուվաճառք իրականացնելու թույլտվության համար.

9) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկահոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար.

10) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար.

11) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահույնով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար.

12) համայնքի վարչական տարածքում՝ համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար.

13) քաղաքային բնակավայրերում ավագանու որոշմամբ սահմանված կարգին համապատասխան տնային կենդանիներ պահելու թույլտվության համար.

14) ավագանու կողմից սահմանված կարգին ու պայմաններին համապատասխան համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների (բացառությամբ Երևան քաղաքի).

15) Հայաստանի Հանրապետության վարչատարածքային միավորների խորհրդանիշերը (գինանշան, անվանում և այլն) որպես օրենքով գրանցված ապրանքային նշան՝ ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու համար, ինչպես նաև ֆիրմային անվանումներում օգտագործելու համար.

16) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար.

17) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար.

18) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար:

Հոդված 10. Տեղական վճարների տեսակները

1. Հայաստանի Հանրապետության համայնքներում կարող են սահմանվել տեղական վճարների հետևյալ տեսակները՝

1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար.

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո՝ շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար.

3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար.

4) համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար.

5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար.

6) համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար.

7) համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար.

8) համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին՝ շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար.

9) կենտրոնացված ջեռուցման համար.

10) ջրմուղ-կոյուղու համար այն համայնքներում, որոնք ներառված չեն ջրմուղ-կոյուղու ծառայությունների մատուցող կազմակերպությունների սպասարկման տարածքներում.

11) ոռոգման ջրի մատակարարման համար այն համայնքներում, որոնք ներառված չեն «Զրոգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն ստեղծված ջրօգտագործողների ընկերությունների սպասարկման տարածքներում.

12) Համայնքի կողմից կառավարվող բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերի կատարման համար.

13) համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար.

14) համայնքային ենթակայության արտադարոցական դաստիարակության հաստատությունների (երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցներ և այլն) ծառայություններից օգտվողների համար.

15) համայնքի վարչական տարածքում, սակայն համայնքի բնակավայրերից դուրս գտնվող՝ ավագանու որոշմամբ հանրային հանգստի վայր սահմանված և համայնքի կողմից կամ համայնքի պատվերով որպես հանրային հանգստի վայր կահավորված տարածքում ընտանեկան կամ գործնական միջոցառումներ անցկացնելու համար.

16) համայնքային սեփականություն հանդիսացող պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և համայնքային ենթակայության թանգարանների մուտքի համար.

17) համայնքային սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման փողոցներում և հրապարակներում (բացառությամբ՝ բակային տարածքների, ուսումնական, կրթական, մշակութային և առողջապահական հաստատությունների, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերի հարակից տարածքների) ավտոտրանսպորտային միջոցն ավտոկայանատեղում կայանելու համար.

18) համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար.

ԳԼՈՒԽ 4

ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ և ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՎԵՐՈՂ

Հոդված 11. Տեղական տուրքերի դրույքաչափերի սահմանումը

1. Տեղական տուրքերի դրույքաչափերը, սույն օրենքով նախատեսված դրույքաչափերի սահմաններում, սահմանում է համայնքի ավագանին՝ համայնքի ղեկավարի ներկայացմամբ, համայնքի տարեկան բյուջեն հաստատելուց առաջ՝ օրենքով սահմանված կարգով:

2. Համայնքներում տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելիս՝ ավագանին կարող է առաջնորդվել գոտիավորման սկզբունքով, ընդ որում՝ տարբեր տեղական տուրքերի և վճարների համար կարող են սահմանվել տարբեր գոտիավորումներ (դրույքաչափերի տարբեր գործակիցներ):

3. Համայնքի վարչական տարածքում բոլոր վճարողների համար սահմանվում են տեղական տուրքերի միասնական դրույքաչափեր, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքի:

4. Ըստ համայնքների տեսակների (սահմանամերձ, լեռնային, բարձր լեռնային, գյուղական կամ քաղաքային բնակավայրեր ներառող) օրենքով կարող են սահմանվել տեղական տուրքերի դրույքաչափերի տարբեր գործակիցներ:

5. Օրացուցային տարվա համար ավագանու կողմից սահմանված տեղական տուրքի դրույքաչափերը փոփոխության չեն կարող ենթարկվել: Օրացուցային տարվա կամ եռամսյակի

համար տեղական տուրքի դրույքաչափը համամասնորեն հաշվարկվում է՝ սույն օրենքով սահմանված թույլտվությունների տրամադրման օրվանից սկսած, մինչև օրացուցային տարվա կամ եռամսյակի ավարտը:

Հոդված 12. Տեղական տուրքերի դրույքաչափերը

1. Հայաստանի Հանրապետության համայնքներում սահմանվում են տեղական տուրքերի հետևյալ դրույքաչափերը՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար.

հիմնական շենքերի և շինությունների համար՝

ա. մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ տասնհինգ հազար դրամ.

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երեսուն հազար դրամ.

- 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ.

-1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ.

-3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հարյուր հազար դրամ.

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երեք հազար դրամ,

- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հինգ հազար դրամ:

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ երեք հազար դրամ.

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից՝ նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին

կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը:

3) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվություն համար՝ հինգ հազար դրամ.

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ երկու հարյուր հազար դրամ.

5) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային համայնքների վարչական տարածքում, բացառությամբ միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների կողեզրում՝ հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, վաճառքի թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ հարյուր հազար դրամ.

6) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում, կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում, կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ վաթսու հազար դրամ.

7) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային համայնքների վարչական տարածքում գտնվող խանութներում, կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում, կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ քսան հազար դրամ.

8) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առուվաճառք իրականացնելու թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ հիսուն հազար դրամ.

9) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար, յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև տաս հազար մեկ դրամ.

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տաս հազար մեկ դրամից մինչև տասներեք հազար մեկ դրամ.

- 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներեք հազար մեկ դրամից մինչև քսան հազար մեկ դրամ.

- 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսան հազար մեկ դրամից մինչև քսանհինգ հազար մեկ դրամ.

- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսանհինգ հազար մեկ դրամից մինչև քառասունհինգ հազար դրամ.

- 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քառասունհինգ հազար դրամից մինչև հարյուր մեկ հազար դրամ.

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար, յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև տաս հազար մեկ դրամ.

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տաս հազար մեկ դրամից մինչև տասներեք հազար մեկ դրամ.

- 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներեք հազար մեկ դրամից մինչև քսան հազար մեկ դրամ.

- 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսան հազար մեկ դրամից մինչև քսանհինգ հազար մեկ դրամ.

- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսանհինգ հազար մեկ դրամից մինչև քառասունհինգ հազար մեկ դրամ.

- 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քառասունհինգ հազար մեկ դրամից մինչև հարյուր հազար մեկ դրամ.

10) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար, յուրաքանչյուր օրվա համար՝ երեք հարյուր հիսուն դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

11) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահունով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացույցային տարվա համար.

ա. առևտրի օբյեկտների համար՝ հինգ հազարից մինչև հիսուն հազար դրամ.

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ քսանհինգ հազարից մինչև հարյուր հազար դրամ.

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ երկու հարյուր հազարից մինչև հինգ հարյուր հազար դրամ.

դ. խաղատների համար՝ հինգ հարյուր հազարից մինչև մեկ միլիոն դրամ.

ե. շահունով խաղերի համար՝ երկու հարյուր հիսուն հազարից մինչև հինգ հարյուր հազար դրամ.

զ. վիճակախաղերի համար՝ հարյուր հազարից մինչև հարյուր հիսուն հազար դրամ.

12) համայնքի վարչական տարածքում՝ համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մինչև հինգ հազար մեկ դրամ.

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի 666օբյեկտի համար՝ հինգ հազար մեկ դրամից մինչև տաս հազար մեկ դրամ.

- 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տաս հազար մեկ դրամից մինչև տասնհինգ հազար մեկ դրամ.

- 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնհինգ հազար մեկ դրամից մինչև քսան հազար մեկ դրամ.

- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ քսան հազար մեկ դրամից մինչև երեսուն հազար մեկ դրամ.

- 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երեսուն հազար մեկ դրամից մինչև հիսուն հազար մեկ դրամ.

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մինչև հազար մեկ դրամ.

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հազար մեկ դրամից մինչև երկու հազար մեկ դրամ.

- 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երկու հազար մեկ դրամից մինչև չորս հազար մեկ դրամ.

- 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ չորս հազար մեկ դրամից մինչև ութ հազար մեկ դրամ.

- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ ութ հազար մեկ դրամից մինչև տասնհինգ հազար մեկ դրամ.

- 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնհինգ հազար մեկ դրամից մինչև քսանհինգ հազար մեկ դրամ.

13) քաղաքային բնակավայրերում ավագանու որոշմամբ սահմանված տնային կենդանիներ պահելու թույլտվության համար. օրացուցային տարվա համար՝ հինգ հազար դրամ.

14) ավագանու կողմից սահմանված կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ Երևան քաղաքի և միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ավտոմոբիլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երկու հազար դրամ.

բ. թունդ ավտոմոբիլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երեք հազար հինգ հարյուր դրամ.

գ. սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ.

դ. այլ արտաքին գովազդի համար՝ հազար հինգ հարյուր դրամ.

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով.

գ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով:

15) Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշերը (գինանշան, անվանում և այլն) որպես օրենքով գրանցված ապրանքային նշան՝ ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ հարյուր հազար դրամ:

16) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար, օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ տաս հազար դրամ:

17) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ հինգ հարյուր հազար դրամ:

18) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝
ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ երկու միլիոն հինգ հարյուր հազար դրամ:

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ հինգ միլիոն դրամ:

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ յոթ միլիոն դրամ:

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ տաս միլիոն դրամ:

2. Սույն հոդվածով սահմանված դրույքաչափերը գյուղական բնակավայրերում համայնքի ավագանու որոշմամբ, կարող են հաշվարկվել 0.3, 0.5 կամ 0.75 գործակիցների կիրառմամբ, քաղաքային բնակավայրերում՝ 0.5 կամ 0.75 գործակիցների կիրառմամբ, բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված դեպքերի:

3. Սույն հոդվածով սահմանված դրույքաչափերը քաղաքային բնակավայրերում համայնքի ավագանու որոշմամբ, կարող են սահմանվել 1.5, իսկ Երևան քաղաքում 3.0 անգամ ավելի, բացառությամբ 1-ին մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերի:

4. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով սահմանված դրույքաչափերը Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմաններձ, լեռնային և բարձրլեռնային համայնքներում հաշվարկվում են 0.3, գյուղական այլ բնակավայրերում՝ 0.5, քաղաքային այլ բնակավայրերում՝ 1.0-ից 3.0, իսկ Երևան քաղաքում՝ 1.0-ից 7.0 գործակիցների կիրառմամբ:

5. Սույն հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափերը Երևան քաղաքում ավագանու որոշմամբ ըստ գոտիավորման, կարող է սահմանվել մինչև 5.0, իսկ «բ» ենթակետով սահմանված դրույքաչափը՝ մինչև 10.0 անգամ ավելի:

Հոդված 13. Տեղական վճարների դրույքաչափերի սահմանումը

1. Տեղական վճարների դրույքաչափերը սույն օրենքով նախատեսված դրույքաչափերի սահմաններում, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, սահմանում է համայնքի ավագանին՝ համայնքի ղեկավարի ներկայացմամբ, համայնքի տարեկան բյուջեն հաստատելուց առաջ՝ օրենքով սահմանված կարգով:

2. Սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված և 8-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սահմանվող տեղական վճարների տեսակների համար համայնքի ավագանին սահմանում է փոխհատուցման վճարներ, որոնց դրույքաչափերը համայնքի ղեկավարի ներկայացմամբ

յուրաքանչյուր տարի սահմանում է համայնքի ավագանին՝ տվյալ ծառայության համար անհրաժեշտ ծախսերի չափով:

3. Օրացուցային տարվա համար ավագանու կողմից սահմանված տեղական վճարների դրույքաչափերը փոփոխության չեն կարող ենթարկվել:

Հոդված 14. Տեղական վճարների դրույքաչափերը

1. Հայաստանի Հանրապետության համայնքներում սահմանվում են տեղական վճարների հետևյալ դրույքաչափերը՝

1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո՝ շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.

3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.

4) համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.

5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.

6) համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.

7) համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար՝ աղբահանության վճարը համայնքի ավագանու կողմից սահմանվում է «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և դրույքաչափերի սահմաններում.

8) համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին՝ շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար՝ աղբահանության վճարը համայնքի ավագանու կողմից սահմանվում է «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և դրույքաչափերի սահմաններում.

9) կենտրոնացված ջեռուցման համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով, բացառությամբ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն սահմանված հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտներում սակագների սահմանման դեպքերի.

10) ջրնուղ-կոյուղու համար այն համայնքներում, որոնք ներառված չեն ջրնուղ-կոյուղու ծառայություններ մատուցող օպերատոր կազմակերպությունների սպասարկման տարածքներում, մասնավորապես՝ ջրամատակարարման և ջրահեռացման վճարներ՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով, բացառությամբ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն սահմանված հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտներում սակագների սահմանման դեպքերի.

11) ոռոգման ջրի մատակարարման համար այն համայնքներում, որոնք ներառված չեն «Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն ստեղծված ջրօգտագործողների ընկերությունների սպասարկման տարածքներում՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով, բացառությամբ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն սահմանված հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտներում սակագների սահմանման դեպքերի.

12) համայնքի կողմից կառավարվող բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերի կատարման համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով.

13) համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով.

14) համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների (երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցներ և այլն) ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով.

15) համայնքի վարչական տարածքում, սակայն համայնքի բնակավայրերից դուրս գտնվող՝ ավագանու որոշմամբ հանրային հանգստի վայր սահմանված և համայնքի կողմից կամ համայնքի պատվերով որպես հանրային հանգստի վայր կահավորված տարածքում ընտանեկան կամ գործնական միջոցառումներ անցկացնելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.

16) համայնքային սեփականություն հանդիսացող պատմության և մշակութային անշարժ հուշարձանների և համայնքային ենթակայության թանգարանների մուտքի համար՝ համայնքի մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով.

17) համայնքային սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման փողոցներում և հրապարակներում (բացառությամբ՝ բակային տարածքների, ուսումնական, կրթական, մշակութային և առողջապահական հաստատությունների, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերի հարակից տարածքների) ավտոտրանսպորտային միջոցն ավտոկայանատեղում կայանելու համար՝ «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական վճարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դրույքաչափերի սահմաններում հաստատվում է համայնքի ավագանու կողմից.

18) համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար մինչև հազար դրամ փոխհատուցման վճար.

ԳԼՈՒԽ 5

ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ԵՎ (ԿԱՄ) ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ԳԱՆՁՄԱՆ ԿԱՐԳԸ

Հոդված 15. Տեղական տուրքի և (կամ) վճարի հաշվարկումը և գանձումը

1. Տեղական տուրք գանձող պաշտոնատար անձինք տեղական տուրքի հաշվարկն իրականացնում են նախքան այդ գործողությունների իրականացումը կամ ծառայությունների մատուցումը, իսկ տեղական վճարի հաշվարկն իրականացնում են ծառայության մատուցումից առաջ և (կամ) հետո՝ ելնելով սույն օրենքի համապատասխան տվյալ համայնքում ավագանու կողմից սահմանված տեղական տուրքի կամ վճարի դրույքաչափերից:

2. Տեղական տուրք գանձող պաշտոնատար անձինք տեղական տուրքը գանձում են նախքան սույն օրենքով սահմանված գործողությունների կատարումը (վավերացումը) և (կամ) թույլտվությունների տրամադրումը կամ համայնքային ծառայությունների մատուցումը, իսկ տեղական վճարը գանձում են ծառայության մատուցումից առաջ և (կամ) հետո՝ համայնքի ավագանու կողմից հաստատված պարբերականությամբ:

Հոդված 16. Տեղական տուրքի և (կամ) վճարի արտոնությունները

1. Արտոնություններ կարող են կիրառվել ավագանու որոշմամբ: Տեղական տուրքերի և (կամ) վճարների գծով՝ սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արտոնությունները՝ ավագանու կողմից սահմանված փաստաթղթերի և տեղեկությունների հետ միասին, համայնքի ղեկավարի ներկայացմամբ, սահմանում է համայնքի ավագանին:

2. Համայնքի պատվերով ծառայություններ մատուցող անձինք՝ տեղական վճարների գծով սույն օրենքով սահմանված արտոնություններ կիրառելու նպատակով, կարող են դիմել համայնքի ղեկավարին՝ ներկայացնելով արտոնություններ ստանալու նպատակով ավագանու կողմից սահմանված փաստաթղթերը և տեղեկությունները:

3. Տեղական տուրքերի և (կամ) վճարների արտոնություններ են՝ տեղական տուրքի և (կամ) վճարի դրույքաչափի նվազեցումը ավագանու կողմից սահմանված տոկոսի չափով, տուրքի և (կամ) վճարի նկատմամբ զրոյական դրույքաչափի կիրառումը կամ հաշվարկված տեղական տուրքի և (կամ) վճարի վճարումից ազատումը:

Հոդված 17. Տեղական տուրքի և (կամ) տեղական վճարի և (կամ) ավել վճարված գումարները վերադարձնելը

1. Տեղական տուրքի և (կամ) տեղական վճարի և (կամ) ավել վճարված գումարները ենթակա են վերադարձման՝ տեղական տուրք և (կամ) վճար վճարողի կողմից համայնքի ղեկավարին ներկայացված դիմումի հիման վրա՝ դիմումը ներկայացնելուն հաջորդող 30 աշխատանքային օրվա ընթացքում:

2. Տեղական տուրքը և (կամ) վճարը ենթակա է վերադարձման, եթե՝

1) տեղական տուրքը և (կամ) վճարը վճարվել է ավելի, քան համայնքի ավագանու կողմից սահմանված դրույքաչափը.

2) տեղական տուրքը և (կամ) վճարը վճարվել է ավելի, քան հաշվարկվել է տուրք կամ վճար հաշվարկող պաշտոնատար անձի կողմից.

3) տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մերժվել է սույն օրենքով սահմանված թույլտվությունների տրամադրումը կամ գործողությունների կատարումը (վավերացումը).

3. Տեղական տուրք և (կամ) վճար վճարողի գումարի վերադարձի վերաբերյալ դիմումը կարող է մերժվել՝ գումարի չափի հիմնավորման անհրաժեշտ և բավարար հիմքերի բացակայության դեպքում:

ԳԼՈՒԽ 6

ՍՈՒՅՆ ՕՐԵՆՔՐ ԽԱԽՏԵԼՈՒ ՀԱՍԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 18. Սույն օրենքը խախտելու համար պատասխանատվությունը

1. Սույն օրենքի խախտումն առաջացնում է պատասխանատվություն՝ Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

2. Սույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պարտավորությունը խախտելու դեպքում համայնքի ղեկավարը ավագանու որոշմամբ սահմանված կարգով իրավունք ունի տուրք վճարողի նկատմամբ կիրառել.

- 1) նախազգուշացում
- 2) թույլտվության կասեցում
- 3) թույլտվության դադարեցում:

Հոդված 19. Տեղական տուրքը կամ վճարը հաշվարկելու և գանձելու պատասխանատվությունը

1. Տեղական տուրքը և (կամ) վճարը ճիշտ հաշվարկելու, ժամանակին գանձելու պատասխանատվությունը դրվում է տեղական տուրք և (կամ) վճար հաշվարկող և գանձող պաշտոնատար անձանց վրա:

Հոդված 20. Տեղական տուրքերը և վճարները հաշվարկելու ու գանձելու կարգը պահպանելու նկատմամբ հսկողությունը

1. Տեղական տուրքերը և վճարները հաշվարկելու ու գանձելու կարգի պահպանման նկատմամբ հսկողությունն իրականացնում է համայնքի ղեկավարը կամ նրա կողմից լիազորված անձը:

Հոդված 21. Տեղական տուրքերը կամ վճարները գանձելիս համապատասխան պաշտոնատար անձանց գործողությունների բողոքարկումը

1. Տեղական տուրքերը և (կամ) վճարները հաշվարկող և գանձող պաշտոնատար անձանց գործողությունները կարող են բողոքարկվել այն տեղական ինքնակառավարման մարմնին, որին անմիջականորեն ենթարկվում կամ որի պատվերով գործում են այդ անձինք, կամ դատարան:

2. Վերադասության կարգով բողոքները քննության են առնվում և դրանց առթիվ որոշումներ են ընդունվում բողոքը ստացվելու օրվանից ոչ ուշ՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում:

Հոդված 22. Տեղական տուրքը կամ վճարը սահմանելու վերաբերյալ որոշումների բողոքարկումը

1. Տեղական տուրքը կամ վճարը սահմանելու վերաբերյալ համայնքի ավագանու որոշումները կարող են բողոքարկվել դատական կարգով:

ԳԼՈՒԽ 7

ԵԶՐԱՓՈՎԿԻՉ ԵՎ ԱՆՅՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 23. Տեղական տուրքերը և վճարները վճարելու արժույթը

1. Տեղական տուրքերը և վճարները վճարվում են Հայաստանի Հանրապետության արժույթով՝ հայկական դրամով:

Հոդված 24. Տեղական տուրքերի և վճարների վերաբերյալ իրազեկումը

1. Համայնքի ղեկավարն ապահովում է տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի, վճարման կարգի և ժամկետների, ամսվա ընթացքում տեղական տուրքերի և վճարների յուրաքանչյուր տեսակի մասով փաստացի ստացված եկամուտների, ինչպես նաև համայնքի ավագանու կողմից սահմանված արտոնություններ ստացած անձանց և համապատասխան գումարների վերաբերյալ ավագանու կողմից սահմանված կարգով իրազեկումը, այդ թվում՝ համայնքի պաշտոնական ինտերնետային կայքի առկայության դեպքում, այդ կայքում հրապարակումը:

2. Իրազեկման այլ միջոցների թվում համայնքի ղեկավարն ապահովում է իր գտնվելու վարչական շենքում, մուտքից ներս գտնվող առավել տեսանելի վայրում գտնվող ցուցատախտակների վրա իր կողմից հաստատված՝ սույն հոդվածի 1-ին մասով սահմանված տեղեկությունները պարունակող տեղեկանքների հրապարակումը:

3. Համայնքի ղեկավարը տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի, դրանց վճարման կարգի և ժամկետների վերաբերյալ տեղեկանքը հրապարակում է ոչ ուշ, քան համապատասխան իրավական ակտերն ուժի մեջ մտնելուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում:

4. Համայնքի ղեկավարն ամսվա ընթացքում ստացված տեղական տուրքերի և վճարների գումարների, ինչպես նաև համայնքի ավագանու կողմից սահմանված արտոնություններ ստացած անձանց և համապատասխան գումարների վերաբերյալ տեղեկանքը հրապարակում է ոչ ուշ, քան տվյալ ամսվա հաջորդող ամսվա 10-ը ներառյալ:

Հոդված 25. Անցումային դրույթներ

Տեղական ինքնակառավարման մարմինները 2017 թվականի համար տեղական տուրքերը և վճարները սահմանելիս առաջնորդվում են սույն օրենքի դրույթներով: »

Հոդված 2. Օրենքի ուժի մեջ մտնելը

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ ՀՀ Ազգային ժողովում նախագծի առաջին ընթերցման քննարկումների և ազդակիր համայնքների հետ իրականացված հանրային քննարկումների արդյունքում ստացված դիտողությունների և առաջարկությունների, դրանց ընդունման կամ չընդունման վերաբերյալ

Առարկության, առաջարկության հեղինակը, գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առարկության. առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունները
ՀՀ Ազգային ժողով	<p>1. Նախագծի 10-րդ հոդվածում, որով սահմանվում է տեղական վճարների տեսակները՝ 10-րդ կետում ջրմուղ-կոյուղու համար սահմանված վճարի դրույթում առաջարկվել է «օպերատոր» բառի լրացում, որպեսզի հստակ նկատի առնվի միասնական ծառայություն մատուցող օպերատոր կազմակերպությունը:</p>	Զի ընդունվել	ՀՀ ջրային ոլորտը կարգավորող իրավական ակտերով «օպերատոր» կամ «միասնական օպերատոր» հասկացությունները սահմանված չեն, փոխարենը սահմանված է «ծառայություններ մատուցող կազմակերպություններ» հասկացությունը, որը և կիրառվել է օրենքի նախագծում:
Ա.Հովհաննիսյան Խ.Հարությունյան	<p>2. Գոտիավորման մասով՝ նախագծի 11-րդ հոդվածի 2-րդ մասում առաջարկվել է հանել է 10.000 և ավելի բնակիչ ունեցող համայնքի սահմանափակումը, հնարավորություն ստեղծելով գոտիավորման սկզբունքը տարածել անխտիր բոլոր համայնքների վրա:</p>	Ընդունվել է	Գոտիավորման մասով՝ նախագծի 11-րդ հոդվածի 2-րդ մասում հանվել է 10.000 և ավելի բնակիչ ունեցող համայնքի սահմանափակումը:
Վ.Էնֆիաջյան Ա.Հովհաննիսյան	<p>3. Առաջարկվել է օրենքի նախագծի 12-րդ հոդվածի բոլոր տուրքերի դրույթաչափերը «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքին համահունչ փոփոխել և սահմանել տառերով՝ թվերի փոխարեն:</p>	Ընդունվել է	Օրենքի նախագծի 12-րդ հոդվածի բոլոր տուրքերի դրույթաչափերը «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքին համահունչ փոփոխվել և սահմանվել է տառերով:
Ս.Մարգարյան Ա.Հովհաննիսյան Խ.Հարությունյան	<p>4. Առաջարկվել է արտոնությունների մասով՝ նախագծի 16-րդ հոդվածի 2-րդ մասը հանել և ավագանուն հնարավորություն տալ սահմանելու սոցիալական առանձին խմբերը, միաժամանակ պահպանել այն դրույթը, որ անհատական</p>	Ընդունվել է	Օրենքի նախագծի 16-րդ հոդվածը շարադրվել է հետևյալ բովանդակությամբ. 4. “Արտոնություններ կարող են կիրառվել ավագանու

Առարկության, առաջարկության հեղինակը, Գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առարկության. առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունները
	արտոնություններ չեն սահմանվում		<p>որոշմամբ: Տեղական տուրքերի և (կամ) վճարների գծով՝ սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արտոնությունները՝ ավագանու կողմից սահմանված փաստաթղթերի և տեղեկությունների հետ միասին, համայնքի ղեկավարի ներկայացմամբ, սահմանում է համայնքի ավագանին:</p> <p>5. Համայնքի պատվերով ծառայություններ մատուցող անձինք՝ տեղական վճարների գծով սույն օրենքով սահմանված արտոնություններ կիրառելու նպատակով, կարող են դիմել համայնքի ղեկավարին՝ ներկայացնելով արտոնություններ ստանալու նպատակով ավագանու կողմից սահմանված փաստաթղթերը և տեղեկությունները:</p> <p>6. Տեղական տուրքերի և (կամ) վճարների արտոնություններ են՝ տեղական տուրքի և (կամ) վճարի դրույքաչափի նվազեցումը ավագանու կողմից սահմանված տոկոսի չափով, տուրքի և (կամ) վճարի նկատմամբ զրոյական դրույքաչափի կիրառումը կամ հաշվարկված տեղական տուրքի և (կամ) վճարի վճարումից ազատումը”:</p>

Առարկության, առաջարկության հեղինակը, գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առարկության. առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունները
Խ.Հարությունյան	5. Նախագծում՝ տեղական տուրքերի մասով առաջարկվել է «ընթացիկ տարի» բառերը փոխարինել «օրացուցային տարի» բառերով:	Ընդունվել է	Նախագծում՝ տեղական տուրքերի մասով «ընթացիկ տարի» բառերը փոխարինվել են «օրացուցային տարի» բառերով:
Ազդակիր համայնքների հետ իրականացված հանրային քննարկումներ	1. Նախագծի 13-րդ հոդվածի 2-րդ մասը առաջարկվել է խմբագրել, մասնավորապես՝ ներառել ավագանու կողմից նոր տեղական վճարների սահմանման դեպքում դրանց համար ավագանու որոշմամբ փոխահատուցման վճարների սահմանումը:	Ընդունվել է	Նախագծի 13-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրվել է հետևյալ նոր խմբագրությամբ. “Սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված և 8-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սահմանվող տեղական վճարների համար համայնքի ավագանին սահմանում է փոխահատուցման վճարներ, որոնց դրույթաչափերը համայնքի ղեկավարի ներկայացմամբ յուրաքանչյուր տարի սահմանում է համայնքի ավագանին՝ տվյալ ծառայության համար անհրաժեշտ ծախսերի չափով”:
	2. Նախագծի 16-րդ հոդվածի 3-րդ մասը առաջարկվել է խմբագրել և ավագանուն հնարավորություն տալ ՀՀ օրենսդրության և իր որոշումների հիման վրա սահմանելու սոցիալական խմբեր, որոնց համար կարող են կիրառվել արտոնություններ:	Ընդունվել է	Տես կետ 4:
	3. Նախագծի 10-րդ հոդվածի (“Տեղական վճարների տեսակները”) 1-ի մասի 7-րդ կետում և 14-րդ հոդվածի (“Տեղական վճարների դրույթաչափերը”) 1-ի մասի 7-րդ կետում առաջարկվել է հանել “և սանիտարական մաքրման” բառերը, քանի որ “Աղբահանության և սանիտարական մաքրման մասին”	Ընդունվել է	Նախագծի 10-րդ հոդվածի (“Տեղական վճարների տեսակները”) 1-ի մասի 7-րդ կետում և 14-րդ հոդվածի (“Տեղական վճարների դրույթաչափերը”) 1-ի մասի 7-րդ

Առարկության, առաջարկության հեղինակը, Գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առարկության. առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունները
	ՀՀ օրենքով որպես գանձույթ սահմանվել է միայն աղբահանության վճարը:		Կետում հանվել է “և սանիտարական մաքրման” բառերը:
Արայիկ Հովհաննիսյան	4. Նախագծի 24-րդ հոդվածի վերնագրում առաջարկվել է հանել “համայնքի անդամներին” բառերը, քանի որ համայնքը իրազեկում է նաև համայնքի անդամ/բնակիչ չհանդիսացող անձանց:	Ընդունվել է	Նախագծի 24-րդ հոդվածի վերնագրում հանվել է “համայնքի անդամներին” բառերը:
ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն	1. Քանի որ մինչ օրենքի ուժի մեջ մտնելը հնարավոր է, որ որոշ համայնքներ արդեն իսկ սահմանած լինեն տեղական տուրքերը և վճարները, իսկ օրենքի նախագծի 11-րդ հոդվածի 5-րդ մասով և 13-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսվում է, որ օրացուցային տարվա համար ավագանու կողմից սահմանված տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը փոփոխության չեն կարող ենթարկվել, ապա առաջարկվել է օրենքի նախագիծը լրացնել անցումային դրույթների հոդվածով և սահմանել, որ տեղական ինքնակառավարման մարմինները 2017 թվականի համար տեղական տուրքերը և վճարները սահմանելիս առաջնորդվում են սույն օրենքի դրույթներով:		
«Համայնքների զարգացման և օրենսդրական բարեփոխումների կենտրոն» ՀԿ	1, Նախագծի 8-րդ հոդվածում առաջարկվել է խմբագրել 2-րդ մասը, որով առաջարկվել է սահմանել, որ տեղական վճարները սահմանվում են “Տեղական տուրքերի և վճարների մասին” ՀՀ օրենքով և ավագանու որոշմամբ, որի արդյունքում նախագծից դուրս են գալիս 8-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերը:	Ընդունվել է	Նախագծի 8-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրվել է հետևյալ կերպ. “Տեղական վճարները և դրանց դրույքաչափերը սահմանվում են սույն օրենքով, ինչպես նաև համայնքի ավագանու որոշմամբ՝ սահմանելով սույն օրենքի տեղական վճարների տեսակների մեջ չներառված տեղական վճարների նոր տեսակներ և դրանց դրույքաչափերը”:

Առարկության, առաջարկության հեղինակը, Գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առարկության. առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունները
<p>ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Խոսքով Հարությունյան</p>	<p>1. Հոդված 3-ը շարադրել հետևյալ խմբագրությամբ. 1. Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝</p> <p>1) Տեղական տուրք՝ տեղական ինքնակառավարման մարմիններին համայնքում բնակիչների ապրելու հարմարավետ պայմաններ ապահովելու նպատակով օրենքով վերապահված բացառիկ իրավասությունից օգտվելու դիմաց ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից մեկանգամյա կամ որոշակի պարբերականությամբ պարտադիր վճարման ենթակա գումար, որի չափը, սույն օրենքի դրույթների հիման վրա, սահմանում է համայնքի ավագանին:</p> <p>2) Տեղական վճար՝ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից կամ նրանց պատվերով օրենքով սահմանված համայնքային ծառայություններից օգտվելու դիմաց վերջիններիս ծախսերի փոխհատուցումը երաշխավորող պարտադիր վճարման ենթակա գումար, որի չափը, սույն օրենքի դրույթների հիման վրա, սահմանում է համայնքի ավագանին:</p> <p>3) Տեղական վճարի սակագին՝ օրենքով տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորությունների շրջանակներում նրանց կողմից կամ նրանց պատվերով կայուն պարբերականությամբ մատուցվող զանգվածային սպառման համայնքային օրենսդրորեն սահմանված որակի ծառայությունների մեկ միավորի ծախսերը փոխհատուցող և համայնքի ավագանու կողմից սահմանված շահութաբերություն ապահովող վճարի</p>	<p>2ի ընդունվել</p> <p>Ընդունվել է մասնակի</p>	<p>1) Առաջարկված սահմանումը՝ բովանդակային առունով, համահունչ է Օրենքի նախագծի տարբերակին:</p> <p>2) Ծախսերի փոխհատուցման գաղափարը ամրագրված է օրենքի նախագծի 13-րդ հոդվածի 2-րդ մասում:</p> <p>3 և 4) Առաջարկում ենք առայժմ ձեռնպահ մնալ “կայուն պարբերականությամբ մատուցվող զանգվածային սպառման համայնքային օրենսդրորեն սահմանված որակի ծառայությունների” և “սակագին” հասկացությունների</p>

Առարկության, առաջարկության հեղինակը, Գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առարկության. առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունները
	<p>չափ:</p> <p>4) Տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորությունների շրջանակում կայուն պարբերականությամբ մատուցվող զանգվածային սպառման համայնքային ծառայություն՝ համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորությունների շրջանակներում համայնքի բնակչության կոմունալ-կենցաղային և սոցիալ-մշակութային կարիքների բավարարման նպատակով տեղական ինքնակառավարման մարմինների կողմից կամ նրանց պատվերով մատուցվող համայնքային ծառայություններ՝ այդ թվում, բայց ոչ միայն, ջրամատակարարման, կոյուղացման, աղբահեռացման, հանրային բաղնիքների, ներհամայնքային տրանսպորտի (ոչ տաքսի ծառայությունը), ինչպես նաև գրադարանների, նախադպրոցական և հատուկ կրթական հաստատությունների ու մշակույթի տների միջոցով իրականացվող ծառայություններ:</p>		<p>ներմուծումից:</p>
	<p>2. Վիճահարույց է հոդված 4-ի անհրաժեշտությունը, քանի որ առանձնահատուկ մեկնաբանություն և հիմնավորում է պահանջում տեղական տուրք կամ վճար վճարողների հաշվառում իրականացնելու պահանջը: Ի՞նչ խնդիր է լուծվում դրանով, առավել ևս, որ կան վճարների տեսակներ, որոնք կարող են կրել մեկանգամյա բնույթ (օրինակ հոդված 10.1, 10.2 կետերով սահմանված վճարները): Առաջարկում են հոդված 4-ը հանել:</p>	<p>Ընդունվել է</p>	<p>Պատգամավորի հետ լրացուցիչ քննարկման արդյունքում ձեռք է բերվել համաձայնություն՝ հոդվածը թողնել նախագծում: Տեղական տուրք և (կամ) վճար վճարողների գրանցամատյանների վարման հիմնական նպատակը՝ գործընթացների թափանցիկությունը, վճարողների տեղեկացված լինելու իրավունքը և, տեղական ֆինանսների հաշվետվողականությունը</p>

Առարկության, առաջարկության հեղինակը, Գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առարկության. առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունները
			ապահովելն է:
	<p>3. Հոդված 5-ի 1-ին մասում «վճարողներն իրավունք ունեն» բառակապակցությունը փոխարինել «վճարողն իրավունք ունի» բառակապակցությամբ: Նույն հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.</p> <p>1) ինքնուրույն հաշվարկել իրենց կողմից վճարման ենթակա տեղական տուրքի չափը, ինչպես նաև պահանջել տեղական ինքնակառավարման մարմնից համապատասխան տուրքի չափի հաշվարկը և անհրաժեշտ հիմնավորումները, Լրացնել նոր 2-րդ ենթակետ հետևյալ բովանդակությամբ.</p> <p>2) պահանջել տեղական ինքնակառավարման մարմնից կամ վերջինիս պատվերով համայնքային ծառայություն մատուցող առևտրային ընկերությունից համապատասխան վճարի չափի հաշվարկն ու անհրաժեշտ հիմնավորումները, Նույն մասի 2-րդ ենթակետը վերահամարակալել 3-րդ և շարադրել հետևյալ կերպ.</p> <p>3) պահանջել տեղական ինքնակառավարման մարմնից անհրաժեշտության դեպքում իրականացնել վճարման ենթակա տեղական տուրքի կամ վճարի չափի վերահաշվարկ, Նույն մասի 3-րդ ենթակետը վերահամարակալել 4-րդ և շարադրել հետևյալ կերպ.</p> <p>4) տեղեկություններ կամ տեղեկանք ստանալ տեղական տուրքերի կամ վճարների իր կողմից կատարած վճարումների մասին, Նույն մասի հաջորդ ենթակետերը համապատասխանորեն վերահամարակալել և</p>	Ընդունվել է մասնակիորեն	<p>“Իրավական ակտերի մասին” ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 9-րդ մասին համաձայն՝ եթե իրավական ակտում բառը նշված է եզակի թվով, ապա դա տարածվում է նաև այդ բառի հոգնակիի վրա և ընդհակառակը, եթե տվյալ իրավական ակտով այլ բան նախատեսված չէ կամ ուղղակի այլ բան չի բխում այդ իրավական ակտի բովանդակությունից:</p> <p>Օրենքի նախագծի մշակման ընթացքում առաջնորդվելով “Իրավական ակտերի մասին” ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 2-րդ մասով, մասնավորապես՝ իրավական ակտերում պետք է բացառվեն իրավական նորմերի անհիմն կրկնությունները, ներքին հակասությունները, այս պարագայում նախագծի 5-րդ հոդվածի կարգորոշումները հստակ սահմանում են իրավունքներ՝ բացառելով անհարկի կրկնությունները:</p>

Առարկության, առաջարկության հեղինակը, գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առարկության. առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունները
	շարադրել ինչպես տեքստում:		
	<p>4. Հոդված 7-ում նախադասությունը ավարտել «սահմանված այլ հիմքերով» բառակապակցությամբ:</p>		<p>“Օրենքով սահմանված այլ հիմքերով” բառակապակցությունը առկա է օրենքի նախագծի 7-րդ հոդվածում և վերոնշյալ “Իրավական ակտերի մասին” ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով կրկնության անհրաժեշտություն առկա չէ:</p>
	<p>5. Արդյո՞ք հոդված 9-ի շարադրանքը ենթադրում է, որ հոդվածում բերված թույլտվությունները տեղական ինքնակառավարման մարմինը պարտավոր է անվերապահ տալ: Կարո՞ղ է որևէ թույլտվության տրամադրում ինչ որ պատճառով մերժել (օրինակ կարող է որևէ մեկին թույլտվություն չտալ տեխնիկական հեղուկների վաճառք իրականացնելու համար, իսկ մեկ ուրիշին՝ թույլ տալ): Եթե ոչ, ապա ինչու՞, իսկ եթե կարող է մերժել, ապա որ դեպքերում: Անհրաժեշտ է նախագիծը լրացնել նմանատիպ կարգավորումներով՝ հիմք ընդունելով այն, որ տեղական իշխանությունը թույլտվությունները պետք է տրամադրի առաջնորդվելով բացառապես համայնքային կյանքը բնակիչների համար առավել հարմարավետ դարձնելու հրամայականով: : Նույն հոդվածի 8-րդ մասի տեքստը համաձայնեցնել հոդված 12-ի 1-ին մասի 8-րդ ենթակետի տեքստի հետ:</p>	<p>Ընդունվել է</p>	<p>Օրենքի նախագծի 8-րդ հոդվածը լրացվել է նոր 4-րդ մասով հետևյալ բովանդակությամբ. “Համայնքի ավագանին սահմանում է նաև այն դեպքերը, երբ կարող են մերժվել սույն օրենքով սահմանված թույլտվությունների տրամադրումը կամ գործողությունների կատարումը (վավերացում)”:</p> <p>Նախագծի 9-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետում ավելացվել է “որոշակի վայրում” բառերը:</p>
	<p>6. Հոդված 10-ի 1-ին մասի 1, 3 և 6 ենթակետերը տեղափոխել հոդված 9-ը, քանի որ դրանք իրենց իմաստով տուրք են:</p>	<p>Ընդունվել է</p>	<p>Օրենքի նախագծի 10-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 6 – րդ կետերում կատարվել են փոփոխություններ, 3-րդ կետը մնացել է նույնը, քանի որ խոսքը գնում է թույլտվության</p>

Առարկության, առաջարկության հեղինակը, Գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առարկության. առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունները
			ձևակերպման անհրաժեշտ աշխատանքների դիմաց վճարման համար:
	Նույն մասի 4-րդ ենթակետը հանել, քանի որ օգտագործման նպատակով տրամադրվող համայնքային սեփականություն հանդիսացող հողակտորների չափագրումը վարձատուի խնդիրն է:	Ընդունվել է	Խմբագրվել է, քանի որ խոսքը չափագրման մասին չէ, այլ փաստաթղթերի փաթեթի նախապատրաստման համար:
	Նշված մասի 7-րդ ենթակետից հանել «և սանիտարական մաքրման» բառակապակցությունը, քանի որ այդ աշխատանքները ընդգրկում են փողոցների և հասարակական վայրերի մաքրումը, որի պատասխանատուն տեղական իշխանության մարմիններն են և այդ աշխատանքների ֆինանսավորումը կատարվում է համայնքի վարչական բյուջեից՝ ավագանու կողմից սահմանված նորմատիվների հիման վրա: Այսինքն սանմաքրման աշխատանքների նամար տեղական վճարի չափ չի սահմանվում:	Ընդունվել է	Նախագծի 10-րդ հոդվածի (“Տեղական վճարների տեսակները”) 1-ի մասի 7-րդ կետում և 14-րդ հոդվածի (“Տեղական վճարների դրույքաչափերը”) 1-ի մասի 7-րդ կետում հանվել է “և սանիտարական մաքրման” բառերը:
	Նույն մասի 8-րդ ենթակետով փորձ է արվում կարգավորել շինարարական աղբի հավաքման, տեղափոխման և տեղադրման ծառայության մատուցման վճարի հարցը: Իրականում նման ծառայությունը չի մատուցվում անընդհատ կամ որոշակի պարբերականությամբ, ավելին դրանց ծավալները փոփոխական են և հետևաբար վճարի կայուն չափի սահմանման ոչ ենթակա: Գործնականում շինարարական աղբի հավաքումը, հեռացումը և տեղադրումը կարող է կատարվել այդ ծառայությունը մատուցելու թույլտվություն ունեցող առևտրային կազմակերպության կողմից, իսկ շինարարական աղբ առաջացնող անձին՝ նշված ընկերությունը ծառայությունը կարող է մատուցել	Չի ընդունվել	Այս կարգավորումը (որպես տեղական վճար) նախատեսված է “Աղբահանության և սանիտարական մաքրման մասին” ՀՀ օրենքով

Առարկության, առաջարկության հեղինակը, գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առարկության. առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունները
	<p>պատվերի հիման վրա, յուրաքանչյուր կոնկրետ դեպքում կոնկրետ գումարով՝ կախված աղբի ծավալից և որակական հատկություններից: Վերջինս կոմերցիոն գործարք է, որի տնտեսական արդյունքները պետք է ներառվեն տվյալ ընկերության ձեռնարկատիրական գործունեության ընդհանուր արդյունքներում և որոնց համապատասխան կծևավորվեն այդ ընկերության հարկային պարտավորությունները: Առաջարկում են 8-րդ ենթակետը հանել:</p> <p>Առաջարկում են հանել նաև նույն մասի 19-րդ ենթակետը, քանի որ այդ կետում նկարագրվածը համայնքային ծառայություն չէ, իսկ հանրային օգտագործման տարածքների բարեկարգումը ֆինանսավորվում է տեղական բյուջեից:</p>	Ընդունված է	Նախագծի 10-րդ հոդվածի (“Տեղական վճարների տեսակները”) 1-ի մասի 19-րդ կետում և 14-րդ հոդվածի (“Տեղական վճարների դրույքաչափերը”) 1-ի մասի 19-րդ կետերը հանվել է:
	<p>7. Հոդված 12-ի 1-ին մասի 2-րդ կետի բ) և գ) ենթակետերում «նորմերը» բառից հետո ավելացնել «և դրույքաչափերը» բառակապակցությունը:</p> <p>Նշված հոդվածի նույն մասի 4,5,6 և 7-րդ ենթակետերում «օրացույցային տարվա համար» բառակապակցությունը փոխարինել «մեկանգամյա վճարման ենթակա տուրք» բառակապակցությամբ, մնացածը՝ ինչպես տեքստում:</p>	Ընդունվել է Զի ընդունվել	<p>Հոդված 12-ի 1-ին մասի 2-րդ կետի բ) և գ) ենթակետերում «նորմերը» բառից հետո ավելացվել է «և դրույքաչափերը» բառակապակցությունը:</p> <p>Հաշվի է առնվել գործող օրենսդրությունը (պրակտիկան) և ֆիսկալ հետևանքները:</p>
	8. Հոդված 14-ի 1-ին մասի 1,2,3,4 ,5,13,14 և 15-րդ ենթակետերում «մատուցված ծառայության դիմաց	Ընդունվել է	Ծախսերի փոխհատուցման գաղափարը ամրագրված է

Առարկության, առաջարկության հեղինակը, Գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առարկության. առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունները
	<p>փոխհատուցման վճար» արտահայտությունը փոխարինել «մատուցված ծառայության ծախսերը փոխհատուցող գումարի չափով» արտահայտությամբ:</p> <p>Նույն մասի 6-րդ ենթակետը տեղափոխել հոդված 12, քանի որ տոնավաճառներին մասնակցության թույլտվություն տալը տեղական տուրքի օբյեկտ է: Այլ հարց է, եթե հոդված 14-ում դիտարկվի տոնավաճառում կամ վերնխաժում առևտրային տարածք վարձակալությամբ տրամադրելու դիմաց վճարի դրույքաչափ սահմանելու հարցը: Առաջարկում են նշված վճարի տեսակն ու համապատասխան դրույքաչափը սահմանել նախագծի համապատասխան հոդվածներում:</p> <p>Նույն մասի 19-րդ ենթակետը հանել՝ վերը բերված հիմնավորումով:</p>	<p>Ընդունվել է</p> <p>Ընդունվել է</p>	<p>օրենքի նախագծի 13-րդ հոդվածի 2-րդ մասում:</p> <p>Կատարվել է խմբագրում և թողնվել է վճարներում:</p> <p>Հանվել է օրենքի նախագծից;</p>
	<p>9. Հոդված 16-ի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.</p> <p>1. Տեղական տուրքերի և վճարների մասով արտոնությունները սահմանում է համայնքի ավագանին՝ համայնքի ղեկավարի ներկայացմամբ, սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված սոցիալական խմբերին պատկանող և սոցիալական աջակցության կարիք ունենցող համայնքի յուրաքանչյուր բնակչի համար անհատապես:</p> <p>Համայնքի ավագանին արտոնություն սահմանելու մասին որոշումը կայացնում է միայն իր կողմից սահմանված փաստաթղթերի և տեղեկանքների առկայության դեպքում:</p>	<p>Ընդունվել է</p>	<p>Տես կետ 4:</p>

Առարկության, առաջարկության հեղինակը, Գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առարկության. առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունները
	<p>Ավելացնել նոր 2-րդ մաս հետևյալ բովանդակությամբ.</p> <p>2. Սույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ ենթակետով սահմանված ծառայությունների մասով տեղական վճարի արտոնություն սահմանելու հետևանքով վճարի սույն օրենքին համապատասխան հաշվարկված գումարի չվճարված մասը ծառայություն մատուցողին փոխհատուցվում է համայնքի վարչական բյուջեից:</p> <p>Սույն հոդվածի 2,3,4,5 և 6-րդ մասերը վերահամարակալել 3,4,5,6 և 7-րդ և շարադրել ինչպես տեքստում:</p>		
	<p>10. Հոդված 17-ի 2-րդ մասի 1-ին կետում «ավելի» բառից հետո նախադասությունը շարունակել՝ « քան հաշվարկվել է տուրք կամ վճար հաշվարկող պաշտոնատար անձի կողմից»:</p> <p>Նշված հոդվածի 3-րդ մասը հանել:</p>	Ընդունվել է	Օրենքի նախագծի 17-րդ հոդվածի 2-րդ մասում ավելացվել է նոր 2-րդ կետ (գոյություն ունեցող 2-րդ կետը թվագրվել է 3-րդ կետ) հետևյալ բովանդակությամբ. “2). տեղական տուրքը և (կամ) վճարը վճարվել է ավելի, քան հաշվարկվել է տուրք կամ վճար հաշվարկող պաշտոնատար անձի կողմից”:
	<p>11. Առաջարկվում է օրենքի նախագծի 14-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետում հանել “ջրօգտագործողների ընկերությունների կողմից հարևան համայնքներում հաստատված մեկ խորանարդ մետր ոռոգման ջրի վճարի չափով” բառերը և սահմանել այն որպես համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումար</p>	Ընդունվել է	Օրենքի նախագծի 14-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետում կատարվել է համապատասխան խմբագրում:
	<p>12. Առաջարկվում է օրենքի նախագծի 14-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետում հանել “կողմից և համայնքի պատվերով” բառերը և սահմանել այն</p>	Ընդունվել է	Օրենքի նախագծի 14-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետում կատարվել է

Առարկության, առաջարկության հեղինակը, Գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առարկության. առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունները
	որպես համայնքի կողմից մատուցված ծառայություններ		համապատասխան խմբագրում: